

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԴԻ

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ինչպե՞ս է կոչվում մի մարմնի դիրքի փոփոխությունն այլ մարմինների նկատմամբ:

- 1) մեխանիկական շարժում
- 2) շարժման հետազիծ
- 3) տեղափոխություն
- 4) ձանապարհ

2 Քանի՞ անգամ պետք է մեծացնել Երկրի մակերևույթից ուղղաձիգ դեպի վեր նետված մարմնի սկզբնական արագությունը, որպեսզի նրա թռիչքի առավելագույն բարձրությունը մեծանա 4 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) 16 անգամ
- 2) 2 անգամ
- 3) 4 անգամ
- 4) 8 անգամ

3 Նյութական կետը X առանցքի երկայնքով շարժվում է $x = 5 + 4t - 2t^2$ օրենքով, որտեղ համապատասխան մեծություններն արտահայտված են $U\dot{z}$ միավորներով: Որքա՞ն է նյութական կետի կոռորդինատն այն դիրքում, որտեղ նրա արագությունը դառնում է զրո:

- 1) 9,5 մ
- 2) 3 մ
- 3) 5 մ
- 4) 7 մ

4 Մարմինը կատարում է ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում: Նրա վրա ազդող ուժերի համազորի մասին ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Համազորը հավասար է զրոյի:
- 2) Համազորը հավասար չէ զրոյի, մոդուլը և ուղղությունը հաստատուն են:
- 3) Համազորը հավասար չէ զրոյի, մոդուլը հաստատուն է, իսկ ուղղությունը՝ ոչ:
- 4) Համազորը հավասար չէ զրոյի, ուղղությունը հաստատուն է, իսկ մոդուլը՝ ոչ:


5 Արբանյակը M զանգվածով մոլորակի շուրջը պտտվում է R շառավիղ ունեցող շրջանագծային ուղեծրով: Որքա՞ն է արբանյակի շարժման արագությունը:

- 1) $\sqrt{G \frac{M}{R^2}}$
- 2) $G \frac{M}{R}$
- 3) $G \frac{M}{R^2}$
- 4) $\sqrt{G \frac{M}{R}}$

6 **m** զանգվածով մարմինը դադարի վիճակում է թեք հարթության վրա, որը հերիզոնի հետ կազմում է α անկյուն: Ինչի՞ է հավասար մարմնի վրա ազդող շփման ուժը:

- 1) 0
- 2) μmg
- 3) $\mu mg \cos \alpha$
- 4) $mg \sin \alpha$

7 Նյութական Օ կետի վրա դադարի վիճակում սկսում են ազդել միևնույն հարթության մեջ գտնվող $\vec{F}_1, \vec{F}_2, \vec{F}_3$ և \vec{F}_4 ուժերը: Ի՞նչ ուղղությամբ կշարժվի այն:




- 1) Կմնա դադարի վիճակում:
- 2) Կշարժվի \vec{F}_2 ուժի ուղղությամբ:
- 3) Կշարժվի \vec{F}_3 ուժի ուղղությամբ:
- 4) Կշարժվի \vec{F}_4 ուժի ուղղությամբ:

8 Ի՞նչ միավորով է արտահայտվում պոտենցիալ էներգիան միավորների ՄՀ-ում:

- 1) kgm^2/ψ
- 2) kgm/ψ^2
- 3) kgm/ψ
- 4) kgm^2/ψ^2

9 Նկարում պատկերված է զետնից h բարձրության վրա գտնվող կետից հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմնի շարժման հետագիծը: Բանաձևներից որո՞վ կարելի է հաշվել մարմնի կինետիկ էներգիան հետագծի ամենավերին կետում: Օդի դիմադրությունն անտեսել:



- 1) $E_k = \frac{mv^2}{2} + mgH$
- 2) $E_k = mgh$
- 3) $E_k = \frac{mv^2}{2} + mgh - mgH$
- 4) $E_k = mgH - mgh$

10 S հիմքի մակերեսով գլանաձև անորի մեջ լցված է h բարձրությամբ ջուր: Ինչի՞ է հավասար ձևավորումն ուժը անորի հատակին (ρ -ն ջրի խտությունն է, P_0 -ն՝ մթնոլորտային ձնշումը):

- 1) ρgh
- 2) ρghS
- 3) $(\rho gh - P_0)S$
- 4) $(\rho gh + P_0)S$

11 Նյութական կետի տատանումները նկարագրվում են $x = 5 \sin(\pi t + 3)$ հավասարումով, որտեղ մեծություններն արտահայտված են ՍՀ-ի միավորներով: Որքա՞ն է տատանումների պարբերությունը:

- 1) 5 վ
- 2) 2 վ
- 3) 3 վ
- 4) 3,14 վ

12 Երկու զսպանակավոր ճռանակների տատանումների հաճախությունները կապված են $\nu_1 = 2\nu_2$ առնչությամբ: Ինչի՞ է հավասար դրանց զանգվածների m_1/m_2 հարաբերությունը, եթե զսպանակներն ունեն միևնույն կոշտությունը:


- 1) $m_1/m_2 = 1/4$
- 2) $m_1/m_2 = 4$
- 3) $m_1/m_2 = 2$
- 4) $m_1/m_2 = 1/2$

13 Ո՞ր երևոյթն է վկայում, որ նյութում մոլեկուլները գտնվում են անընդհատ քառսային շարժման վիճակում:

- 1) բրոռունյան շարժումը
- 2) հեղուկի գոլորշիացումը
- 3) նյութի բյուրեղացումը
- 4) տաքացնելիս մարմնի ընդարձակվելը

14 Ինչպե՞ս է փոխվում հաստատուն զանգվածով իդեալական գազի ձնշումը 1 վիճակից 2 վիճակ անցնելիս:

- 1) հարցին հնարավոր չէ միանշանակ պատասխան տալ
- 2) ձնշումն աճում է
- 3) ձնշումը նվազում է
- 4) չի փոխվում



15

Իղեալական գազի ճնշումը իզոթերմ կերպով մեծացրին 3 անգամ: Ինչպէ՞ս ս փոխվեց գազի խտությունը:

- 1) պատասխանը կախված է գազի ծավալից
- 2) մեծացավ 3 անգամ
- 3) փոքրացավ 3 անգամ
- 4) մնաց նույնը

16

Ինչպէ՞ս է փոխվում հաստատուն գանգվածով իղեալական գազի ներքին էներգիան իզոթերմ ընդարձակման դեպքում:

- 1) կարող է մեծանալ կամ փոքրանալ
- 2) մեծանում է
- 3) փոքրանում է
- 4) չի փոխվում

17

Ինչպէ՞ս է կոչվում այն պրոցեսը, որի դեպքում գազին հաղորդված ամբողջ ջերմաքանակը ծախսվում է գազի ներքին էներգիայի մեծացման համար:

- 1) աղիաբատ
- 2) իզոթերմ
- 3) իզովար
- 4) իզոխոր

18

Ի՞նչ միավորով է չափվում շոգեգոյացման տեսակարար ջերմությունը:

- 1) Զ/Վ
- 2) Զ/ԿԳ
- 3) Զ/(ԿԳ Կ)
- 4) Զ/Կ

19

Ամռանը օրվա ո՞ր ժամերին է օդի հարաբերական խոնավությունն ավելի մեծ: Համարել, որ օդում ջրային գոլորշիների խտությունը հաստատուն է:

- 1) Գոլորշու հաստատուն խտության դեպքում հարաբերական խոնավությունը միշտ հաստատուն է:
- 2) ցերեկվա ժամերին
- 3) վաղ առավոտյան
- 4) երեկոյան


20 Ինչպե՞ս կփոխվի էրկու անշարժ կետային լիցքերի կուլոնյան փոխազդեցության ուժը, եթե նրանց հեռավորությունը մեծացնենք 2 անգամ:

- 1) կփոքրանա 2 անգամ
- 2) կմեծանա 4 անգամ
- 3) կմեծանա 2 անգամ
- 4) կփոքրանա 4 անգամ

21 C_1 և C_2 էլեկտրառունակություններով էրկու կոնդենսատորներ միացված են հաջորդաբար: Որքա՞ն է նրանց ընդհանուր էլեկտրառունակությունը:

- 1) $C = C_1 C_2 / (C_1 + C_2)$
- 2) $C = C_1 + C_2$
- 3) $C = (C_1 + C_2)^2$
- 4) $C = \sqrt{C_1 + C_2}$


22 Ինչի՞ է հավասար նկարում պատկերված կետային $+q$ և $-q$ լիցքերի ստեղծած ընդհանուր էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլը A կետում, եթե այդ կետում $+q$ լիցքի ստեղծած էլեկտրաստատիկ դաշտի լարվածության մոդուլը E_1 է, իսկ $-q$ լիցքինը՝ E_2 :



- 1) $\sqrt{E_1^2 - E_2^2}$
- 2) $E_1 + E_2$
- 3) $E_1 - E_2$
- 4) $\sqrt{E_1^2 + E_2^2}$


23 Ինչի՞ է հավասար նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 10 Ом
- 2) 2 Ом
- 3) 4 Ом
- 4) 6 Ом



24 Ինչպե՞ս կփոխվի ամպերաչափով անցնող հոսանքի ուժը բանալին փակելիս, եթե $U_{ab} = \text{const}$:

- 1) չի փոխվի
- 2) կմեծանա 2 անգամ
- 3) կմեծանա 4 անգամ
- 4) կփոքրանա 2 անգամ



25

Ի՞նչ լիցքակիրներով է պայմանավորված հոսանքը կիսահաղորդիչներում:

- 1) Էլեկտրոններով և խոռաչներով
- 2) Միայն էլեկտրոններով
- 3) Միայն իոններով
- 4) Էլեկտրոններով և իոններով

26

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Լորենցի ուժը գործում է ...

- 1) մազնիսական դաշտում դադարի վիճակում գտնվող չլիցքավորված մասնիկի վրա:
- 2) մազնիսական դաշտում շարժվող չլիցքավորված մասնիկի վրա:
- 3) մազնիսական դաշտում շարժվող լիցքավորված մասնիկի վրա:
- 4) մազնիսական դաշտում դադարի վիճակում գտնվող լիցքավորված մասնիկի վրա:

27

Շրջանակը տեղադրված է համասեռ մազնիսական դաշտում: Ինչի՝ է հավասար շրջանակի հարթության և մազնիսական ինդուկցիայի վեկտորի կազմած անկյունը, որի դեպքում շրջանակում մազնիսական հոսքը առավելագույնն է:

- 1) 0°
- 2) 90°
- 3) 60°
- 4) 45°

28

Ո՞ր բանաձևով կարելի է հաշվել L ինդուկտիվության կոճի մազնիսական դաշտի էներգիան, եթե հոսանքի ուժը նրանում I է, իսկ փաթույթի դիմադրությունը՝ R :

- 1) $\frac{I^2 R}{2}$
- 2) $I^2 R$
- 3) LI^2
- 4) $\frac{LI^2}{2}$

29

Տատանողական կոնտուրում կոնդենսատորի էլեկտրառունակությունը մեծացրին 4 անգամ: Ի՞նչ պետք է անել, որպեսզի էլեկտրամազնիսական տատանումների պարբերությունը մնա նույնը:

- 1) կոճի ինդուկտիվությունը փոքրացնել 2 անգամ
- 2) կոճի ինդուկտիվությունը մեծացնել 4 ամգամ
- 3) կոճի ինդուկտիվությունը փոքրացնել 4 անգամ
- 4) կոճի ինդուկտիվությունը մեծացնել 2 ամգամ

30


Նշեք սխալ պնդումը:

- 1) Հայելուց անդրադառնալիս լույսի արագության մոդուլը փոխվում է:
- 2) Օպտիկապես համասեռ միջավայրում լույսի ճառագայթը ուղիղ գիծ է:
- 3) Օպտիկապես անհամասեռ միջավայրում լույսը տարածվում է կորագիծ:
- 4) Լույսի արագությունը կախված է միջավայրի բեկման ցուցիչից:

31

Ինչպե՞ս կփոխվի հայելու մակերևույթին ընկնող և անդրադարձող ճառագայթների կազմած անկյունը՝ անկման անկյունը 20° -ով մեծացնելիս:

- 1) չի փոխվի
- 2) կմեծանա 10 $^{\circ}$ -ով
- 3) կմեծանա 20 $^{\circ}$ -ով
- 4) կմեծանա 40 $^{\circ}$ -ով



32

Նկարում պատկերված են ընկնող և բեկված ճառագայթների ընթացքը n_1 բեկման ցուցիչով միջավայրից n_2 բեկման ցուցիչ ունեցող միջավայր անցնելիս: Ո՞րն է այդ միջավայրերի բեկման ցուցիչների ձիւտ հարաբերակցությունը:

- 1) Հարաբերակցությունը կախված է անկման անկյունից:
- 2) $n_1 > n_2$
- 3) $n_1 < n_2$
- 4) $n_1 = n_2$

33

Կարելի՞ է արդյոք հավաքող ոսպնյակով ստանալ առարկայի փոքրացված պատկերը:

- 1) Կարելի է, եթե առարկան տեղադրվի կրկնակի կիզակետից դուրս:
- 2) Ոչ, չի կարելի:
- 3) Կարելի է, եթե առարկան տեղադրվի ոսպնյակի և կիզակետի միջև:
- 4) Կարելի է, եթե առարկան տեղադրվի կզակետի և կրկնակի կիզակետի միջև:

34

Ինչպիսի՞ն կարող է լինել առարկայի պատկերը ցրող բարակ ոսպնյակում:

- 1) Միայն մեծացած կամ առարկայի չափին հավասար
- 2) Միայն մեծացած
- 3) Միայն փոքրացած
- 4) Մեծացած կամ փոքրացած

35

Ո՞ր երևոյթը չի կարելի բացատրել երկրաշափական օպտիկայի օրենքներով:

- 1) լույսի դիֆրակցիան
- 2) ստվերի առաջացումը
- 3) լույսի բեկումը
- 4) լույսի անդրադարձումը

36

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Միննոյն պայմաններում բոլոր ֆիզիկական երևոյթները հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում ընթանում են միննոյն ձևով:
- 2) Լույսի արագությունը կախված չէ միջավայրից:
- 3) Լույսի արագությունը կախված է աղբյուրի և դիտողի արագությունից:
- 4) Լույսի արագությունը վակուումում կախված է հաշվարկման համակարգի ընտրությունից:

37

Լույսն ուղղահայաց ընկնում և անդրադառնում է հայելու մակերևոյթից: Ինչի՞ է հավասար մեկ ֆուտոնի կողմից հայելուն հաղորդած իմպուլսը, եթե v -ն լույսի հաճախությունն է, λ -ն՝ ալիքի երկարությունը, h -ը Պլանկի հաստատունը, c -ն լույսի արագությունը վակուումում:

- 1) $2hv/c$
- 2) hv/c
- 3) $hv/2c$
- 4) hc/λ

38


Ինչի՞ է հավասար լույսի հաճախությունը, եթե նրա ազդեցությամբ տեղի ունեցող ֆուտէֆեկտի կարմիր սահմանը v_0 է, իսկ ֆուտէլեկտրոնների կասեցնող լարումը U է:

- 1) $hv_0 + eU$
- 2) $v_0 + U/h$
- 3) $v_0 + eU$
- 4) $v_0 + eU/h$

39

Նկարում պատկերված են ատոմի էներգիական մակարդակները: Ո՞ր անցման դեպքում է ատոմի ձառագայթած ֆուտոնի ալիքի երկարությունը նվազագույնը:

- 1) $E_4 \rightarrow E_1$
- 2) $E_1 \rightarrow E_4$
- 3) $E_4 \rightarrow E_3$
- 4) $E_2 \rightarrow E_4$



40 Որոշել նեյտրոնների թիվը այն միջուկում, որն առաջանում է թորիումի ($^{234}_{90}Th$) միջուկի երեք α -տրոհման արդյունքում:

- 1) 138
- 2) 144
- 3) 140
- 4) 232

41 Աչքը զգում է 600 նմ ալիքի երկարությամբ դեղին լուսը, եթե ցանցաթաղանթի վրա ընկնառ լուսի հզորությունը $1,98 \cdot 10^{-18}$ Վտ է: Քանի՞ ֆուտոն է այդ ռեպրում ընկնում ցանցաթաղանթի վրա յուրաքանչյուր վայրկյանում: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ ՋՎ է, լուսի արագությունը վակուումում՝ $3 \cdot 10^8$ մ/վ:

42 Որքա՞ն է յուրաքանչյուրը 3 կգ զանգվածով երկու մարմիններից կազմված համակարգի ընդհանուր իմպուլսը, եթե նրանք 6 մ/վ և 8 մ/վ արագություններով շարժվում են փոխուղղահայաց ուղղություններով:

- 43 0,3 կգ զանգվածով ազոտի զազր անտրի պատերին գործադրում է $8,3 \cdot 10^4$ Τաճնշում: Ազոտի ջերմաստիճանը 280 Կ է, մոլային զանգվածը՝ 0,028 կգ/մոլ, զազային ունիվերսալ հաստատունը՝ 8,3 Ω/(մոլԿ): Ինչի՞ է հավասար զազի ծավալը: Պատասխանը բազմապատկել 10-ով:
- 44 10 մ/վ արագությամբ շարժվող լիցքավորված մասնիկը մտնում է 0,1 S_լ ինդուկցիայով համասեռ մազնիսական դաշտ՝ ինդուկցիայի վեկտորին ուղղահայաց ուղղությամբ: Մասնիկի վրա ազդող Լորենցի ուժը 1 մկՆ է: Ինչի՞ է հավասար մասնիկի լիցքը: Պատասխանը բազմապատկեք 10⁶-ով:

(45-46) 0,1 մ շառավղով անթափանց սկավառակը գտնվում է լույսի կետային աղբյուրի և Էկրանի միջև: Սկավառակի հեռավորությունը լուսատու կետից 1 մ է, իսկ լուսատու կետից մինչև Էկրանը եղած հեռավորությունը 3 մ: Էկրանին սկավառակի ստվերն ունի շրջանի տեսք:

45

Որքա՞ն է ստվերի շառավիղը: Պատասխանը բազմապատկեր 10-ով:

46

Լուսատու կետը և սկավառակը պահելով նույն դիրքում՝ որքանո՞վ պետք է Էկրանը հեռացնենք սկավառակից, որպեսզի նրա ստվերի շառավիղը մեծանա 2 անգամ:

(47-48) 4 կգ զանգվածով բեռը նրան ամրացված զսպանակի օգնությամբ հավասարաշափ շարժում են հորիզոնական հարթության վրա: Զսպանակի առանցքը գուգահեռ է հարթությանը: Բեռի և հարթության միջև շփման հործակիցը 0,2 է:

47

Որքա՞ն է բեռի վրա ազդող շփման ուժը:

48

Որքա՞ն է զսպանակի կոշտությունը, եթե այն երկարել է 4 սմ-ով:

(49-50) Երկու մաթեմատիկական ձոճանակներից մեկի տատանման պարբերությունը երկու անգամ մեծ է մյուսի պարբերությունից: Ճոճանակների երկարությունների տարբերությունը 30 սմ է:

49

Որքա՞ն է երկար ճոճանակի երկարությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

50

Որքա՞ն է կարծ ճոճանակի երկարությունը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

(51-52) Որոշակի բարձրությունից ընկնող 50 գ զանգվածով պողպատե գնդիկը 43 մ/վ արագությամբ հարվածում է գետնին և վեր բարձրանում 2,45 մ: Օդի ռիմադրությունն անտեսել: Պողպատի տեսակարար ջերմունակությունը՝ $450 \text{ } \Omega/\text{կգ}\text{Կ}$ է, ազատ անկման արագացումը՝ $10 \text{ } \text{մ}/\text{վ}^2$:

51

Հարվածի հետևանքով որքա՞ն էներգիա է կորցնում գնդիկը:

52

Ընդունելով, որ կորցրած ամբողջ էներգիան ծախսվում է գնդիկի տաքացման վրա, որոշեք, թե քանի աստիճանով կբարձրանա գնդիկի ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի սանդղակի:

(53-54) 10 նՎլ լիցք ունեցող 2 գ զանգվածով գնդիկը 3 մ/վ արագությամբ մտնում է համասեռ էլեկտրական դաշտ նրա ուժագծերի ուրությամբ։ Էլեկտրական դաշտի լարվածությունը 10^6 Վ/մ է։

53

Ի՞նչ աշխատանք է կատարում էլեկտրական դաշտը գնդիկը 70 սմ տեղափոխվելիս։ Պատասխանը բազմապատկեք 10^3 -ով։

54

Որքա՞ն է գնդիկի արագությունը էլեկտրական դաշտում 70 սմ տեղափոխվելիս։

(55-57) 20 սմ կիզակետային հեռավորությամբ ցրող ոսպնյակում առարկայի կեղծ պատկերը երկու անգամ ավելի մոտ է ոսպնյակին, քան առարկան:

55

Որքա՞ն է առարկայի պատկերը հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10-ով:


56

Որքա՞ն է առարկայի պատկերի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

57

Որքա՞ն է առարկայի պատկերի խոշորացումը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

(58-60) Իդեալական գազի հետ կատարվում է նկարում պատկերված շրջանային պրոցեսը: Գազի նվազագույն ծավալը 83 l է, մոլային գանգվածը՝ $4 \cdot 10^{-3} \text{ կգ/մոլ}$, գազային ունիվերսալ հաստատունը՝ $8,3 \Omega/(\text{մոլ}\text{Կ})$:




58 Որքա՞ն է գազի գանգվածը: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

59 Որքա՞ն է գազի ծավալը 3 վիճակում: Պատասխանը բազմապատկեք 10^3 -ով:

60 Որքա՞ն է արտաքին ուժերի կատարած աշխատանքը 3 վիճակից 1 վիճակին անցնելիս: Պատասխանը բազմապատկեք 10^{-2} -ով:

(61-64) Նկարում պատկերված շղթայում կոնդենսատորի էլեկտրառակությունը $C = 200 \text{ } \mu\text{F}$ է, իսկ նրա լիցքը՝ $q = 15 \text{ } \mu\text{C}$: Յուրաքանչյուր դիմադրությունը $R = 10 \text{ } \Omega$ է, իսկ հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը՝ $r = 1 \text{ } \Omega$:

61 Որքա՞ն է լարումը A և B կետերի միջև:



62 Որքա՞ն է ընդհանուր հոսանքի ուժը շղթայում:

63 Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ԷլՇՈՒ-ն:

64

Որքա՞ն է հնսանքի աղբյուրի ներքին դիմադրությունում անջատված հզորությունը:

(65-68) Մարմինը, սկսած որոշակի կետից, կատարում է հավասարաչափ դանդաղող շարժում: Շարժման չորրորդ վայրկյանի վերջում մարմնի արագությունը $1,2 \text{ м/վ}$ է, իսկ յոթերրորդ վայրկյանի վերջում մարմինը կանգ է առնում:

65

Որքա՞ն է մարմնի սկզբնական արագությունը: Պատասխանը բազմապատկեր 10-ով:

- 66** Որքա՞ն է մարմնի արագացման մոդուլը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:
- 67** Որքա՞ն ճանապարհ է անցնում մարմինը մինչև կանգ առնելը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:
- 68** Որքա՞ն ճանապարհ է անցնում մարմինը շարժման վերջին վայրկյանում: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

69

Հաստատեք կամ ժիստեք հետևյալ պնդումները:

- 1) Ֆուտոնի էներգիան և խմբուլսը կախված են լույսի հաճախությունից:
- 2) Ֆուտոնի էներգիան ուղիղ համեմատական է լույսի ալիքի երկարությանը:
- 3) Ֆուտոնի իմպուլսը կարելի է որոշել $p = h\lambda$ բանաձևով, որտեղ h -ը Պլանկի հաստատունն է, λ -ն լույսի ալիքի երկարությունը:
- 4) Ֆուտոնի E էներգիան և p իմպուլսը կապված են $E = p/c$ առնչությամբ, որտեղ c -ն լույսի արագությունն է վակուումում:
- 5) Պլանկի վարկածի համաձայն՝ ատոմների կամ մոլեկուլների տատանումների էներգիան կարող է ունենալ $n\hbar\nu$ արժեքները, որտեղ h -ը Պլանկի հաստատունն է, n -ն՝ տատանումների հաճախությունը, իսկ ν -ը դրական ամբողջ թիվ է:
- 6) Համաձայն Բորի ստացիոնար վիճակների մասին քվանտային կանխադրույթի՝ ատոմում էլեկտրոնի էներգիան կարող է ընդունել միայն ընդհատ՝ քվանտացված արժեքներ:

70

100 °C ջերմաստիճանի ջրային գոլորշին խտանալով վեր է ածվում 100 °C ջերմաստիճանի ջրի: Հաստատեք կամ ժիստեք հետևյալ պնդումները:

- 1) Պրոցեսի ընթացքում գոլորշին շրջապատին ջերմաքանակ տվեց:
- 2) Ջրի վերածվելիս մոլեկուլների միջին կինետիկ էներգիան փոքրացավ:
- 3) Ջրի վերածվելիս մոլեկուլների միջին քառակուսային արագությունը չփոխվեց:
- 4) Ջրի վերածվելիս մոլեկուլների թիվը մեծացավ:
- 5) Մոլեկուլների փոխազդեցության պոտենցիալ էներգիան փոքրացավ:
- 6) Ջրի վերածվելիս ներքին էներգիան մեծացավ: